

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՎԱՆԱԶՈՐ ԱՍԱՐ» ԱՌՈՂՋԱՐԱՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԿԻՐՈՎԱԿԱՆԻ (ՎԱՆԱԶՈՐԻ) ԱԾԽԱԹԹՎԱՅԻՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՄԵՂՐՈՒՏԻ
ՏԵՂԱՄԱՍԻ 30/71-ՐԴ ՀՈՐԱՏԱՆՑՔԻ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՎԱՆԱԶՈՐ ԱՍԱՐ»
ԱՌՈՂՋԱՐԱՆ ՍՊԸ
տնօրեն՝

Ժ. ԱՄԻՐՅԱՆ

Երևան – 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ.....3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....8

1 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....17

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ.....30

3 ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ68

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ.....71

5. ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....76

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ.....80

7.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ92

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ94

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության գործոնների, նյութերի, երևույթների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

Նախատեսվող գործունեություն` «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ » օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ վերոգրյալ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում` նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում` շահագործումից հանում (**ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող** գերեզմանոցի դեպքում` փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

Նախաձեռնող` հիմնադրությային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

Ազդակիր համայնք` ազդակիր բնակավայր ներառող համայնք.

Շահագրգիռ անձ կամ հանրություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Գործընթացի մասնակիցներ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ներառյալ ազդակիր համայնք, ազդակիր բնակավայր, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների կամ փորձաքննության գործընթացին.

Հայտ՝ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված գործողություններ իրականացնելուց առաջ նախաձեռնողի կողմից լիազոր մարմին ներկայացվող փաստաթղթերի փաթեթ.

Հաշվետվություն՝ համապատասխան լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի մշակած ՌԷԳ-ի կամ ՇՄԱԳ-ի արդյունքներն ամփոփող փաստաթուղթ.

Չրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (այսուհետ՝ ՇՄԱԳ)՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

Ռազմավարական էկոլոգիական գնահատում (այսուհետ՝ ՌԷԳ)՝ հիմնադրությային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների որոշման և գնահատման գործընթաց, որը ներառում է ՌԷԳ հաշվետվության շրջանակի որոշակիացումը և դրույթները, ՌԷԳ հաշվետվության նախապատրաստումը, շահագրգիռ հանրության մասնակցության և մասնագիտական խորհրդակցությունների անցկացման ապահովումը, հիմնադրությային փաստաթղթում ՌԷԳ հաշվետվության դրույթների, հանրության մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների հաշվի առնելը.

Փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի փաթեթ՝ նախագծային փաստաթուղթ, ՌԷԳ կամ ՇՄԱԳ հաշվետվություն, սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փաստաթղթեր.

Բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների գուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

Պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

Լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն

բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

Հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

Հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

Կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների

տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

Բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլն»:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),

- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),

- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),

- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),

- Բուսական աշխարհի մասին (1999),

- Կենդանական աշխարհի մասին (2000),

- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2002),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
- 14.08.2008թ-ի ՀՀ կառավարության «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումը
- 29.01.2010թ-ի ՀՀ կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշումը,
- 29.01.2010թ-ի ՀՀ կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781 որոշումը,
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ս արձանագրային որոշում,
- ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում

ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 արձանագրային որոշում,

- և ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը,
- ՀՀ կառավարության 2012թ-ի օգոստոսի 23-ի «ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՉՍՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 1128-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշումը,
- ՀՀ կառավարության 2017թ-ի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին ՀՀ կառավարության N 676-Ն» որոշումը,
- ՀՀ կառավարության 2021թ-ի հոկտեմբերի 21-ի «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՉՍՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՆՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 1079-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1733-ն որոշումը,
- ՀՀ կառավարության 08.09.2011թ. թիվ 1396-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն վերոնշյալ որոշման, հողաշերտը առաջնային կարգով օգտագործվելու է խախտված հողերի ռեկուլտիվացիայի համար:
- Հողի բերրի շերտի պահեստավորման պահանջները կարգավորվում են ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-ն որոշմամբ:

- ՀՀ կառավարության 2021թ-ի օգոստոսի 18-ի «ՌԵԿՈՒՆԻՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1352-ն որոշում:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ-ի «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 369-Ն հրամանը:
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք (2014)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳՓ) մասին օրենքը, որն ընդունվել է 2014թ-ին, սահմանում է նախագծային գործունեության և հայեցակարգային փաստաթղթերի պետական փորձաքննության իրականացման իրավական հիմունքները, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի հիմնական քայլերը:

ՇՄԱԳՓ-ը պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է: Օրենքում սահմանվում են տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցյուններ, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները:

Օրենքն արգելում է, որպեսզի որևէ տնտեսական միավոր գործի կամ որևէ հայեցակարգ, ծրագիր, համալիր սխեմա կամ գլխավոր հատակագիծ իրականացվի առանց ՇՄԱԳՓ դրական եզրակացության:

Բնապահպանության նախարարությունը նույնպես կարող է անհրաժեշտության դեպքում նախաձեռնել շրջակա միջավայրի ազդեցության վերանայում:

ՇՄԱԳՓ մասին օրենքը սահմանում է ծանուցման, փաստաթղթերի պատրաստման, հանրային լուսմների և բողոքարկման կարգը և պահանջները:

ՇՄԱԳՓ մասին օրենքը նույնպես սահմանում է հանրային լուսմների ներգրավման և մասնակցության պահանջը:

Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանի կամ ծրագրի իրականացման համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

ՇՄԱԳՓ մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային կոնվենցիաների և զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկ (WB), ԱՄՆ ՄԶԳ (USAID), ԵԽ (EU), ՀՄԿ (MCC), և այլն) բնապահպանական գնահատման մոտեցումներին:

Սույն Օրենքը նաև ապահովում է հանրության ներգրավումն ու մասնակցությունը ՇՄԱԳՓ բոլոր փուլերին:

ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 Ընդերքի մասին օրենսգրքով:

Ի կատարումն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի պահանջների ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարը 30.12.2011թ. N 249-Ն հրամանով հաստատել է «Ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացվող բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատմանը, բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը և հանքի փակման ծրագրին ներկայացվող պահանջներ»-ը:

Օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացող բնապահպանական և անվտանգության խնդիրների կարգավորման և դրանց արդյունավետ վերահսկման նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը» (10.01.2013 թիվ 22-Ն):

Հողային օրենսգիրք (2001)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, Էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

«Թափոնների մասին» օրենք (2004)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա

միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը:

Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ-ին և լրամշակված՝ 2022թ-ին)

- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման

նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-ն որոշումը (2008)

- Հայաստանի Հանրապետության կառավարության **2008** թվականի օգոստոսի **14-ի N 967-Ն** որոշմամբ հաստատվել է թվով **232** բնության հուշարձանների ցանկը, որոնցից **106-ը** դասակարգված են երկրաբանական, **48-ը**՝ ջրաերկրաբանական, **40-ը**՝ ջրագրական, **17-ը**՝ բնապատմական և **21-ը**՝ կենսաբանական տիպաբանական խմբերում: Ցանկի կազմման համար հաշվի են առնվել բնության հուշարձանների ընտրության հետևյալ չափանիշները. - բնության կուսական առանձին էտալոնային միավորների /տարածքների/ առկայությունը, - տարածքների գեղագիտական և բնապատկերային առանձնահատուկ գրավչությունը, - էնդեմ, ռելիկտ, հազվագյուտ, արժեքավոր, վտանգված և անհետացող տեսակների կենսավայրերի առկայությունը, որոնք ընդգրկված չեն պահպանվող տարածքներում, - գենետիկական, տեսակային, կառուցվածքային, արտադրողական և այլ արժեքավոր հատկությունները, - գիտաճանաչողական և ռեկրեացիոն առանձնահատուկ նշանակության տարբեր գոյացությունների առկայությունը

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշումը

- ՀՀ նոր Կարմիր գրքի պատրաստումը իրականացվել է 2007–2009 թթ-ի ժամանակահատվածում առկա տվյալների և նոր դաշտային ուսումնասիրությունների հիման վրա՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և այլ գիտական կառույցների մասնագետների կողմից:

Տեսակների վիճակի գնահատումը և կատեգորիաների որոշումը իրականացվել է միջազգային չափորոշիչների հիման վրա՝ Բնության պահպանության միջազգային միության դասակարգիչների կիրառմամբ (IUCN, 2007–2009, տարբերակ 3.1):

ՀՀ Կարմիր գիրքը ներառում է 153 տեսակի ողնաշարավոր կենդանիներ, որոնցից՝ ոսկրային ձկներ (Osteichthyes –7 տեսակ), երկկենցաղներ (Amphibia –2 տեսակ), սողուններ (Reptilia –19 տեսակ), թռչուններ (Aves–96 տեսակ)

և կաթնասուններ (Mammalia –29 տեսակ): Ներառված են նաև 155 տեսակի անողնաշար կենդանիներ, այդ թվում՝ 16 տեսակի փորոտանիներ և 139 տեսակի միջատներ:

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշումը

Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը հրատարակվել է 2007–2009 թվականների ժամանակահատվածում առկա տվյալների և նոր դաշտային ուսումնասիրությունների հիման վրա՝ ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի մասնագետների կողմից: 2010 թվականին հրատարակված Կարմիր գրքում ընդգրկված է 452 բույսերի և 40 սնկերի տեսակների նկարագրություններ և 223 առանձին մտահոգիչ կարգավիճակով բուսատեսակներ: Կարմիր գրքում գրանցված 675 բուսատեսակները ներկայացված են միջազգայնորեն ընդունված 6 կարգավիճակով՝ կրիտիկական վիճակում գտնվող, վտանգված, խոցելի, վտանգման սպառնացող վիճակին մոտ, տվյալների անբավարարությամբ և քիչ մտահոգող տեսակներ:

Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշում, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված

ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012 թվականի N 1484-Ն որոշում, որը սահմանում է ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների իրականացումը, որը կապահովի ջրային ռեսուրսները սպառումից և աղտոտումից պահպանելը:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը:

1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Նախագծի հիմնական դրույթները

Նախագիծը կազմվել է ՀՀ Լոռու մարզի Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի Մեղրուտ տեղամասի թիվ 30/71 հորատանցքի շահագործման նպատակով, 20 տարի ժամկետով՝ $300.0\text{մ}^3/\text{տարի}$ կամ $0.01\text{լ}/\text{վրկ}$ ջրաքանակով:

Ընկերությունը ցանկանում է առողջարանային նպատակով իրականացնել հանքային ջրերի արդյունահանումը: Նման միջոցառումը կպահպանի ստեղծված աշխատատեղերը՝ նպաստելով սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը, միաժամանակ ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել ազդակիր համայնքի կարիքների բավարարմանը:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է $300.0\text{մ}^3/\text{տարի}$ կամ $0.01\text{լ}/\text{վրկ}$: Հանքային ջուրը օգտագործվելու է Վանաձոր քաղաքում գտնվող ընկերության առողջարանում:

Ընկերությունը նախատեսում է առողջարանային նպատակով ստանալ հանքային ջրի արդյունահանման թույլտվություն՝ 20 տարի գործողության ժամկետով:

Ջրհավաք ածխաթթվային հանքային ջրի թիվ 30/71 հորատանցքից դեպի առողջարան հանքային ջրի տեղափոխումն իրականացվելու է խմելու որակի չժանգոտվող պողպատից պատրաստված խողովակաշարով: Հանքային ջրի հորատանցքի շուրջ տարածքը պարիսպապատված է: Այդ տարածքում առկա է շինություն, որտեղ տեղադրված են ջրահավաք բաք և դեպի առողջարան ջրմուղ պոմպ և հանգույց: Հանքային ջուրը փակ ցիկլով /հորոտանցքից դուրս եկող խողովակով անմիջապես/ լցվում է վերոնշյալ բաքը, որտեղից պոմպի միջոցով մղվում է առողջարան՝ բուժական նպատակներով օգտագործելու համար:

Ընկերությունում ստեղծված են ժամանակակից առողջապահությանն ներկայացվող բոլոր պահանջներին բավարարող պայմաններ ու մշտապես իրականացվում են բարեփոխման ու բարելավման գործընթացներ:

1.2 Հանքավայրի մշակման եղանակի ընտրությունը

Հորատանցքի տարեկան արտադրողականությունն ըստ հանքային ջրի կազմում է 300.0մ³/տարի կամ 0.01/վրկ: Հանքային ջուրը օգտագործվելու է Վանաձոր քաղաքում գտնվող ընկերության առողջարանում:

Հանքավայրի շահագործման ժամկետը՝ 20 տարի:

Ջրհավաք ածխաթթվային հանքային ջրի թիվ 30/71 հորատանցքից դեպի առողջարան հանքային ջրի տեղափոխումն իրականացվելու է խմելու որակի չժանգոտվող պողպատից պատրաստված խողովակաշարով: Հանքային ջրի հորատանցքի շուրջ տարածքը պարիսպապատված է: Այդ տարածքում առկա է շինություն, որտեղ տեղադրված են ջրահավաք բաք և դեպի առողջարան ջրմուղ պոմպ և հանգույց: Հանքային ջուրը փակ ցիկլով /հորոտանցքից դուրս եկող խողովակով անմիջապես/ լցվում է վերոնշյալ բաքը, որտեղից պոմպի միջոցով մղվում է առողջարան՝ բուժական նպատակներով օգտագործելու համար: Նման պայմաններում շրջակա միջավայրի, մասնավորապես մակերևույթային ջրերի աղտոտում չի նախատեսվում:

Հանքային ջուրը պոմպով $d=80$ մմ չժանգոտվող վերգետնյա խողովակներով մոտ 800մ հեռավորությամբ մղվում է առողջարան և հավաքվում այլումինե բաքի մեջ, որտեղից օգտագործվում է ըստ անհրաժեշտության: Այդ բաքից ևս $d=80$ մմ չժանգոտվող խողովակով հանքային ջուրը տրվում է տաքացուցիչ, տաքացվում է և օգտագործվում բուժական հանքային լոգանքների համար: Առողջարանը ունի ջրաբուժական բաժանմունք՝ հանքային լոգանքների պրոցեդուրաներ իրականացնելու համար, որը հագեցված է համապատասխան սարքավորումներով և հանգույցներով (տես լուսանկարները): Որպես սանիտարական մաքրման միջոցներ օգտագործվում են ժամանակակից լավագույն վիացնող միջոցները (Detox Spray, Domestos, Sidelux Profi): Օգտագործցած ջուրը առողջարանից հեռացվում է քաղաքային կոյուղիով:


Հանքային ջրի հորատանցքի շուրջ տարածքը պարիսպապատված է: Այդ տարածքում առկա է 76.92քմ մակերեսով քարե շինություն, որտեղ տեղադրված են ջրահավաք բաքը, դեպի առողջարան ջրմուղ պոմպը և հանգույցը:

Պարսպապատ տարածքը հանդիսանում է հորատանցքի պահպանության սանիտարական առաջին (խիստ ռեժիմի) գոտին՝ 0.1863հա մակերեսով :


Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքի սահմաններից դուրս: Գոտին պարսպատված է ցանկապատով և ապահովված է պահպանությամբ:

Գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները առկա են: Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և այլ ենթակառուցվածքներից (գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր, կոյուղագծեր): Այլ օժանդակ շինություններ կամ ենթակառուցվածքների իրականացում չի նախատեսվում:

Սանիտարական գոտու սխեմատիկ պատկերը հետևյալն է.



Հորատանցքի գլխամասն ունի հետևյալ կառուցվածքը.



Հորատանցքն ունի հետևյալ կառուցվածքը՝

- Հորատանցքի խորությունը՝ 309.0մ
- Սկզբնական տրամագիծը՝ 168.0մմ

- Վերջնական տրամագիծը՝ 111.0մմ
- Ամրակապող խողովակաշարի երկարությունը՝ 127.0մ, վերջնական տրամագիծը՝ 100.0մմ:

Հորատանցքի նման կառուցվածը բացառում է հանքային ջրերի աղտոտումը մակերևույթային ջրերով:

Հորատանցքի ելքի խողովակը գտնվում է երկրի մակերևույթից շուրջ 50սմ բարձրության վրա և անմիջապես միանում է դեպի ջրահավաք բաք տանող խողովակաշարին (տես լուսանկարները):

Նախատեսվող գործունեությունը չի ուղեկցվում արտանետումներով ու թափոններով: Դրա մասին է վկայում ստորերկրյա ջրերի (քաղցրահամ և հանքային) հանքավայրերի շահագործման երկարամյա փորձը, որը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա: Հանքային ջրի արդյունահանման ընթացքում նախագծային կորուստներ չեն նախատեսվում:

Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք (կապտաժային) հորատանցքից հաստատված պաշարի չափից ավելի արդյունահանումը:

Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործումը պետք է իրականացվի կոնկրետ հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրի հաստատված պաշարի քանակին, նրա քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

Հանքավայրի արդյունաբերական շահագործման ժամանակ անհրաժեշտ է՝

- Ապահովել սխտեմատիկ մշտադիտարկումներ շահագործողական հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:
- Ջրհավաք (կապտաժային) հորատանցքը կահավորել վերերկրյա կառույցով: Իրականացնել հորատանցքի կապտաժային կառույցի ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևույթային աղտոտված ջրերի մուտքը դեպի ջրհավաք ավազան:

- Հորատանցքի շուրջը կառուցել առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի, աղբյուրի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:
- Ջրհավաք հորատանցքի ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար:

1.3 Հիդրոերկրաբանական ստացիոնար ռեժիմային դիտարկումներ

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնաձին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվող և իրականացվող ռեժիմային դիտարկումների նպատակն է՝

- 1) հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը.
- 2) հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը.
- 3) ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- 4) ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.
- 5) ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.
- 6) ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

7) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

Ելնելով վերոհիշյալից, հանքավայրի թիվ 30/71 հորատանցքում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն և 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշումների հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիտորինգ)՝ ջրի և գազի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն մթնոլորտային օդի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:

Հանքային ջրի օգտագործման ռեժիմի կանոնակարգման, արդյունավետ օգտագործման, աղտոտումից և հյուծումից զերծ պահելու, ինչպես նաև գործող աղբյուրի տեխնիկական վիճակի և լեռնասանիտարական գոտիների պահպանության նպատակով, կատարվում են մշտական ռեժիմային դիտարկումներ՝ ջրի ծախսի և ջերմաստիճանի չափումներ, ջրի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կկնքվի պայմանագիր՝ ՀՀ Լոռու մարզի Կիրովականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի Մեղրուտ տեղամասի թիվ 30/71 հորատանցքի նկատմամբ ստացիոնար հիդրոերկրաբանական ռեժիմային դիտարկումներ կատարելու մասին: Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալու, որ ՀՀ Լոռու մարզի Կիրովականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի Մեղրուտ տեղամասի թիվ 30/71 հորատանցքի շահագործման պաշարները անփոփոխ են:

Ջրի ծախսի չափումները կատարելու համար հորատանցքի մուտքի մոտ կառուցվելու է 20սմ բարձրության և 40սմ լայնության չափսի ուղղանկյուն եռանկյուն ջրթափ (Թոմսոնի):

Ջրի ջերմաստիճանի չափումները կատարվում են TMԿ-1 մակնիշի ջերմաչափով՝ 0.2°C ճշտությամբ:

1.4 Լաբորատոր հետազոտություններ

Հանքավայրի տարածքում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքները ուղեկցվել են հանքային ջրերի քիմիական հետազոտությունների հետ, ուսումնասիրվել է նաև հանքային ջրերի գազային կազմը:

Քիմիական հետազոտությունները ներկայացված են քիմիական անալիզի 3 ուղղություններ. ստուգողական չափագրումներ՝ (HCO_3 , CO_2 (լուծույթ), PH), կրճատ անալիզ՝ NH_4 , Na+K, Mg, Ca, Cl, SO_4 , O_2 , CO_2 , SiO_3 , HCO_3 ընդհանուր միներալիզացիա, չոր մնացորդը և ընդհանուր անազիզ՝ K, Mg, Ca, Cl:

Տեղամասում առանձին որոշվել են օրգանական նյութերը (հումուս, բիտում, ֆոնոլ), ինչպես նաև ուրանի և ռադիումի քանակությունները:

Ստուգողական անալիզներ կատարվել են յուրաքանչյուր 8 ժամը մեկ, ռեժիմային և փորձնական շահագործումների ժամանակ՝ ամենօրյա ռեժիմով:

Հանքային ջրերի գազային կազմը ուսումնասիրվել է երկրաբանական վարչության կենտրոնական լաբորատորիայում:

Дата замера	Динамический уровень, м	Дебит воды, л/сек	Температура воды на устье, °С	Температура газа, °С	Дебит спонтанного CO ₂ , л/сек	Газовый фактор, л/л	Количество спонтанного газа при нормальных условиях, л/л	Вес спонтанного CO ₂ , г/л	Растворимый CO ₂ , г/л	Общая газовая насыщенность, г/л	НСO ₂ , г/л	Общая минерализация, г/л
I	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1974г.												
3.05	+0.52	3,0	15,4	-	-	-	-	-	-	-	0,40	-
4.05	+0.52	2,93	15,6	-	-	-	-	-	-	-	0,40	-
5.05	+0.51	3,0	15,5	-	-	-	-	-	-	-	0,47	0,7
6.05	+0.52	2,93	15,6	-	-	-	-	-	0,8	0,8	0,51	-
7.05	+0.52	2,93	15,4	-	-	-	-	-	-	-	0,63	-
8.05	+0.52	3,0	15,6	-	-	-	-	-	1,6	1,6	0,74	-
10.05	+0.52	3,0	15,5	-	-	-	-	-	1,7	1,7	0,81	2,0
11.05	+0.52	3,0	15,5	-	-	-	-	-	1,6	1,6	0,87	-
12.05	+0.52	2,93	15,4	-	-	-	-	-	1,7	1,7	0,86	-
13.05	+0.52	3,0	15,4	-	-	-	-	-	1,7	1,7	0,92	-
14.05	+0.52	3,0	15,4	-	-	-	-	-	1,6	1,6	0,89	-
15.05	+0.52	2,93	15,5	-	-	-	-	-	1,7	1,7	0,81	2,1
16.05	+0.51	2,93	15,5	-	-	-	-	-	1,8	1,8	1,10	-
17.05	+0.51	3,0	15,3	-	-	-	-	-	1,7	1,7	1,13	-
18.05	+0.51	2,93	15,4	-	-	-	-	-	1,8	1,8	1,14	-
19.05	+0.51	3,0	15,4	-	-	-	-	-	1,7	1,7	1,15	-
20.05	+0.51	2,93	15,4	-	-	-	-	-	1,7	1,7	1,21	2,2
21.05	+0.51	3,0	15,3	-	-	-	-	-	1,8	1,8	1,2	-
22.05	+0.51	3,0	15,2	-	-	-	-	-	1,82	1,82	1,05	-
23.05	+0.52	2,93	15,4	-	-	-	-	-	1,78	1,78	1,0	-
24.05	+0.52	2,93	15,2	-	-	-	-	-	1,72	1,72	1,0	-
25.05	+0.52	3,0	15,4	-	-	-	-	-	1,80	1,80	1,0	2,3
26.05	+0.52	3,08	15,3	-	-	-	-	-	1,80	1,80	1,13	-
27.05	+0.50	3,08	15,4	-	-	-	-	-	1,82	1,82	1,14	-
28.05	+0.51	2,93	15,2	-	-	-	-	-	1,81	1,81	1,05	-
29.05	+0.51	3,0	15,3	-	-	-	-	-	1,80	1,80	1,12	-
30.05	+0.52	3,0	15,4	-	-	-	-	-	1,78	1,78	1,16	2,3
31.05	+0.51	3,0	15,4	-	-	-	-	-	1,8	1,8	1,1	8
ср. мес.	+0.51	2,98	15,4	-	-	-	-	-	1,70	1,7	0,93	-
10.06	+0.51	3,0	15,5	-	-	-	-	-	1,8	1,8	1,21	3,1
20.06	+0.51	3,0	15,4	-	-	-	-	-	1,84	1,84	1,41	3,0
28.06	+0.50	2,93	15,5	-	-	-	-	-	1,84	1,84	1,0	2,9
ср. мес.	+0.51	2,98	15,5	-	-	-	-	-	1,83	1,83	1,27	3,0
10.07	+0.51	3,08	15,4	-	-	-	-	-	1,82	1,82	1,33	3,0
19.07	+0.52	3,0	15,6	-	-	-	-	-	1,82	1,82	1,17	3,1
30.07	+0.51	2,93	15,6	-	-	-	-	-	1,78	1,78	1,23	3,1
ср. мес.	+0.51	3,0	15,5	-	-	-	-	-	1,81	1,81	1,24	3,13
9.08	+0.51	3,08	15,5	-	-	-	-	-	1,80	1,80	1,14	2,8
20.08	+0.51	3,0	15,6	-	-	-	-	-	1,78	1,78	1,10	2,8
30.08	+0.50	3,0	15,6	-	-	-	-	-	1,76	1,76	1,21	3,1
ср. мес.	+0.51	3,02	15,6	-	-	-	-	-	1,78	1,78	1,15	2,9

1.5 ԼԵՌՆԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳՈՏԻ

Հանքային ջրերի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն ջրառի լավ տեխնիկական վիճակի, դրա չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից:

Համաձայն Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 67-ի ստորերկրյա ջրերի հանքավայրերի շուրջը սահմանվում են սանիտարական պահպանության գոտիներ:

ՀՀ Լոռու մարզի Կիրովականի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի Մեղրուտ տեղամասի թիվ 30/71 հորատանցքի ռացիոնալ շահագործման հիմնական պահանջները կայանում են հետևյալում՝

- հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրի հաստատված պաշարի քանակի, նրա քիմիական, այդ թվում ջերմաստիճանի, շահագործվող կապտաժի ռեժիմների խիստ համապատասխանությամբ:

- հորատանցքի շահագործման ժամանակ չի թույլատրվում արդյունաբերական նպատակով շահագործվող ջրի հաստատված պաշարների չափաքանակից ավելի արդյունահանում:

- հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրի քանակի և որակի նկարագիրը նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հանքավայրի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:

- հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

1.6. ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

Հորատանցքի ջրերի բարվոք մանրէաբանական կազմը, շրջապատող միջավայրի և հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը սնման և բեռնաթափման մարզերում, բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ և երրորդ (սահմանափակ ռեժիմի) գոտիների անտեսման և միայն առաջին (խիստ ռեժիմի) գոտու անհրաժեշտության մասին:

Վերջինս կոչված է ջրհավաք կառույցի տեղամասը պահպանելու համար:

Վերջինս կոչված է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքի սահմաններից դուրս: Գոտին պարսպատված է քարե ցանկապատով և ապահովված է պահպանությունով:

Հանքավայրի սանիտարական պահպանության գոտու սահմաններում պետք է պահպանվի ռեժիմ, որը կապահովի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:

Հատուկ ուշադրություն պետք է արվի հանքային ջրի ջրհավաք ջրառի պահպանմանը:

Առաջին սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ աղբյուրի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ, այդ թվում օբյեկտների կառուցումը, մշտական կամ ժամանակավոր մարդկանց բնակվելը, թունաքիմիկատների և պարարտանյութերի տեղակայումը և օգտագործումը, ցանկացած կեղտաջրերի թափումը, լվացք անելը, անասունների ջուր խմեցնելը, ինչպես նաև գործողություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հանքավայրի հանքային ջրերի և նրանց սանիտարական վիճակի վրա:

Ընդերքօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք

կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ արգելվում է:

Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի համաձայնությամբ:

Գոտու տարածքում թույլատրվում է լեռնային և հողային աշխատանքների կատարումը, կառույցների շինարարությունը (կապտաժների, պոմպային կայանների, ջրագծերի, պահակակետի, ջրի տարաների), հակասողանքային և հակաէրոզիոն աշխատանքների կատարումը, որոնք նպաստում են ստորերկրյա ջրերի հանքավայրն ու ջրատար հորիզոնը աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու:

Տվյալ գոտում կատարվում են սանիտարական վիճակը հսկող մշտական դիտարկումներ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն: Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Եթե հաստատված պաշարների և մոնիտորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480–Ն որոշման պահանջների, անհրաժեշտ կլինի վերագնահատել հանքային ջրի հանքավայրի պաշարները և ներկայացնել ոլորտը կարգավորող լիազոր մարմնի քննարկմանը և հաստատմանը, որից հետո կներկայացվի “Հանրապետական երկրաբանական ֆոնդ” ՊՈԱԿ հաշվառման և պահպանման համար:

1.7. Նախագծի այլընտրանքը

Ջրոյական տարբերակ՝ նշանակում է, որ նախագիծը չի իրականացվում: Տեղի չի ունենա որևէ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, չեն բացվի նոր աշխատատեղեր, ինչը չի նպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում: Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև՝ հուլիս և օգոստոս ամիսներին «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս): Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս), Այրում քաղաքից վերև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սահմանի մոտ ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ջորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիս և

օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Մարց գետի ջրի որակը գետաբերանում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գարգառ գետի ջրի որակը ակունքում հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Շնող գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Իջևան քաղաքից վերև ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև ջրի որակը օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը օգոստոսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):






Գծապատկեր 51. Դերեղ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 52. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 53. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

2.6 Բուսական և կենդանական աշխարհ

Կլիմայի և ռելիեֆի բազմազանության, բնապատմական զարգացման և ուրույն աշխարհագրական դիրքի շնորհիվ բազմազան է նաև Լոռու մարզի բուսականությունը: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Լոռու մարզը գտնվում է տարբեր բուսաաշխարհագրական մարզերի շփման վայրում: Ըստ Ա. Լ. Թախտաջյանի՝ ՀՀ տարածքի հյուսիսային հատվածն ընկած է Կովկասյան բուսաաշխարհագրական մարզի տարածքում, որտեղ բնորոշ են բուսականության մեզոֆիլ (խոնավասեր) տեսակները:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար:

Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (*Stipa pennata* L.), սեզ սողացող (*Elytridia repens* L.), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis* L.), շյուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis* Huds.), կծմախոտ (*Bothriochloa ischaemum* L.), իսկ խոնավ տեղերում՝ երիցուկ (*Tanacetum*): Չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազ ասեղնային (*Astragalus picnophyllus* Stev.) և զանազան թփերը, մացառները:

Տափաստանային բուսականության առանձին տիպ են կազմում հացազգի բույսերը: Բավականաչափ տարածված են փշոտ գազաթփերը, որոնցից տեղ-տեղ ձևավորվում են տափաստանները: Դրանք բնորոշ են հատկապես Փամբակի լեռներին:

Լոռու մարզում ֆիզիկաաշխարհագրական պայմանների բազմազանության շնորհիվ առանձնացվում են տափաստանների հետևյալ ենթաշրջանները՝ Լոռու, Ջավախքի, Վիրահայոց լեռների, Փամբակ-Դեբեդի, հովտասարավանդային և Բազում-Փամբակի:

Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի լեռնաշղթաների (Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց) զառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը:

Մարգագետնատափաստանային բուսականություն: Տարածվում է 2300մ-ից վեր, համեմատաբար խոնավ վայրերում, որի շնորհիվ հարուստ է փարթամ և հյութեղ խոտերով: Այն բաժանվում է երկու ենթագոտու՝ ստորին կամ մերձալպյան և վերին կամ ալպյան: Մերձալպյան մարգագետինները միջանցիկ դեր են կատարում և կազմված են բարձր խոտերից: Այս ենթագոտին զբաղեցնում է 2800-2900մ բարձրությունները: Մերձալպյան գոտում տարածվում են ցորնազգիները, լոբազգիները և տարախոտերի այլ տեսակներ՝ ցորնուկ, դաշտավլուկ, հոտավետ հասկիկ, ինչպես նաև երեքնուկ, խատուտիկ, մեխակ և այլն:

Լոռու մարզի անտառները հարուստ են ծառատեսակներով (մոտ 60 տեսակի ծառ, 90 տեսակից ավելի թուփ): Անտառի հիմնական ծառատեսակը հաճարենի արևելյան (*Fagus orientalis* Lipsky) է, որը խոնավության և հողի նկատմամբ բավական պահանջկոտ ծառատեսակ է: Այն չի սիրում օդի ոչ շատ բարձր ջերմաստիճանները և ոչ էլ շատ խիստ ցրտի պայմանները: Հաճարենու հետ աճում են կաղնի արևելյան (*Quercus macranthera* Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացական (*Q. iberica* Stev.), թխկի վրացական (*Acer ibericum* M. Bieb.), լորենի կովկասյան (*Tilia caucasica*), բոխի սովորական (*Carpinus betulus* L.) և այլն: Կաղնին երբեմն կազմում է ինքնուրույն անտառ: Այստեղ տարածված է կաղնու երկու տեսակ՝ լեռնային կամ արևելյան և

վրացական: Կաղնին համեմատաբար ցրտադիմացկուն և չորադիմացկուն է, ունի ամուր բնափայտ, երկարակյաց է, տալիս է բարձր որակի բնափայտ:


Բուն ալպյան բուսականությունը տարածվում է 2800-2900մ-ից վեր: Այն ծածկված է խոշոր, վառ գույնի ծաղիկներով, որոնք հաճախ այնքան խիտ են և բազմերանգ, որ նմանվում են գորգերի՝ կոչվելով «ալպյան գորգեր»:

Ալպյան և մերձալպյան մարգագետնատափաստանային բուսականությունն իր սննդարար ու հարուստ խոտածածկույթով կարևոր նշանակություն ունի մարզի անասնապահության զարգացման համար: Սակայն մարդու տնտեսական գործունեության շնորհիվ մարզի բուսածածկույթը զգալիորեն տուժել է:

Հանքավայրի շրջանի բուսականությունը ներկայացված է լեռնային տափաստաններին բնորոշ տեսակներով, որոնք ձևավորվում է բարեխառն և չոր կլիմայի պայմաններում, զբաղեցնում է ընդարձակ մակերես՝ տարածվելով մարզի ցածրադիր շրջաններից մինչև 2300-2400մ բարձրությունները: Այն ունի հարուստ տեսակային կազմ:

Տարածված են տարատեսակ խոտաբույսեր՝ փետրախոտ, սեզ, շյուղախոտ, կծմախոտ, թիթեռնածաղիկ, լոբազգիներ, ինչպես նաև օշինդր (յավշան) դաշտավուկ, անթառամ և այլն: Փետրախոտային տափաստաններից մի փոքր ավելի բարձր տափաստանային բուսականության մի առանձին տիպ են կազմում հացազգատարախոտային բույսերը:

Բուսականության տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկարում:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԲՆԱԿԱՆ ԲՈՒՍԱԾԱԾԿԻ ՏԻՊԵՐ

Մարգագեղնային բուսականություն

- 1 Բարձրալայան տարախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glabriculumis* Sakalo, *Sibbaldia parviflora* Willd.
- 2 Ցածրալայան (ենթալայան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ

Մարգագեղնալուսալուսաբանային բուսականություն

- 3 Մասնակցությամբ՝ *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L.

Անլուսային բուսականություն

- 4 Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky) կաղնու (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen), բոխու (*Carpinus betulus* L., *C. orientalis* Mill), հացենու (*Fraxinus excelsior* L.), լորենու (*Tilia begoniifolia* Stev.).

Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դողոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ: Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են արագաշարժը (*Alburnoides bipunctatus*), կողակը (*Varicorhinus capoeta capoeta*), Քուռի բեղլուն (*Barbus lacerta cyri*), Քուռի լերկաձուկը (*Nemachilus brandti*):

Հանքավայրի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում:

Հորատանցքի ենթակառուցվածքների տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր չեն արձանագրվել :

2.8 ՍԵՅՍՄԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ

20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ում տեղադրված ըստ սեյսմիկ գոտիների Հայաստանի Հանրապետության համայնքների ու բնակավայրերի ցանկի, Վանաձոր քաղաքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.5g գրունտի առավելագույն հորիզոնական արագացումը:

2.9 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյու- նաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:




Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2023 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

2023 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն. Երևանում հուլիս և օգոստոս ամիսներին, Արարատում՝ հուլիսին:

Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

2023 թվականի 3-րդ եռամսյակում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



2.10 ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Հանքային ջրի հորատանցքի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ և գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ):


2.11 ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Անմիջապես Վանաձորի տարածքը չի հատվում որևէ ԲՀՊՏ-ի հետ: Տարածաշրջանում առկա են հետևյալ ԲՀՊՏ-ները.

ա) Մրտավանդենու պետական արգելավայր, հիմնվել է 1959 թվականին, տարածքը՝ 1000 հա, գտնվում է Վանաձորից դեպի հարավ մոտ 4 կմ հեռավորության վրա:

բ) Մարգահովտի պետական արգելավայր, հիմնվել է 1959 թվականին, տարածքը՝ 5000հա, գտնվում է Վանաձորի հարավ-արևելյան ուղղությամբ մոտ 5.5 կմ հեռավորության վրա:

գ) «Գյուլագարակի սոճու» պետական արգելավայր, հիմնվել է 1958 թվականին՝ տարածքը 2576 հա, գտնվում է Վանաձորից դեպի հյուսիս՝ Ստեփանավանին մոտ՝ այս երկու քաղաքների միջև լեռնային շրջանում, Վանաձորից մոտ 15 կմ հեռավորության վրա:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇԱՆՆԵՐ

Խ/Ի	ԱՆՎՈՒՄ	ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ	ԶԲԱՂԵՑՐԱՅ ՏԱՐԱԾՔԸ (հա)
ԱԶԳԱՅԻՆ ՊԼՐԿԵՐ			
1.	«Գիլիջան»	1958 - սրբվելը, 2002 - իջ ազգային սպակ	ավելի քան 30 000
2.	«Սևան»	1978	150 100
«Սևան» ազգային պարկի արգելաօջային գոտիներ			
1	Նորայնի		4 Կարճաղբյուրի
2	Նորասուտի		5 Գիլիճի
3	Լեճի		6 Արտանի
«Սևան» ազգային պարկի պահպանման գոտի			
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ			
1.	Գյուլագարակի ստճու	1958	2 576
2.	Իջևանի	1971	7 800
3.	Արջատիկենու	1958	40
4.	Գանձաքարի	1971	6 800
5.	Մարջախուռի	1959	5 000
6.	Սիմաթարի կենտ պուրակ	1959	25
7.	Գեղիկի	1971	6 000
8.	Գիլու նուրբանտաային	1958	3 312
9.	Մրտավարդենու	1959	10 000
10.	Հանրապետի ջրբաճակալ	1981	9 150

Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Հանքավայրի տարածաշրջանում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքները բացակայում են:

Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր.

ՀՀ [Լոռու մարզի](#) Վանաձոր քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2007 թ-ի մարտի 15-ի թիվ 385-ն որոշումով:

ՎԱՆԱՁՈՐ քաղաք

Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն
1	2	3
ԱՄՐՈՑ	Ք.ա. 2 հազ. 2-րդ կես	քաղաքի կենտր. հատվածի հվ-ամ մասում, քիմկոմբինատից հվ-աե, «Սուլեյման» սարի գագաթին
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ. 2-րդ կես	ամրոցի աե լանջին
ԱՄՐՈՑ «ԱԼԵՀԵՐԻ»	Ք.ա. 2 հազ. 2-րդ կես	Խնձորուտ թաղամասի (նախկին Վարդանու գյուղ) հս մասում, «Քյոր Օղլու յալ» վայրում
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի շրջակայքում
ԱՄՐՈՑ «ԳԱՆՁԱՔԱՐ»	Ք.ա. 2 հազ. 2-րդ կես	Խնձորուտ թաղամասի աե մասում, լքված քարհանքի մոտ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի շրջակայքում, «Թափաբաշ» բլրի հվ լանջին
ԱՄՐՈՑ - ԴԻՏԱԿԵՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքի կենտր. հատվածի հվ-ամ մասում, «Սուլեյման» սարից 500 մ հվ
ԱՄՐՈՑ - ԴԻՏԱԿԵՏ	միջնադար	քաղաքի կենտր. հատվածի ամ մասում, հեռուստաաշտարակի մոտ, սարի գագաթին
ԱՐՁԱՆ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ	1963 թ.	քիմկոմբինատի բակում
ԲԱՑՕԹՅԱ ԿԱՅԱՆ	Ք.ա. 12-10 հազ.	Փամբակ գետի ձախ ափին, քաղաքի կենտր. գերեզմանոցից աե, «Սպիտակ հողեր» վայրում
ԲԵՐԴԵՆ «ԹԱԳԱՎՈՐԱՆԻՍ»	Ք.ա. 4-1 հազ., հել-լեն. ժրջ., միջնադար	Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, համանուն բլրի վրա
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	Դինաց թաղամասում, Թագավորանիստից հվ-աե, տնամերձերի տարածքում
ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 4-1 հազ., հել-լեն. ժրջ., միջնադար	Փամբակ գետի ձախափնյա երկու վտակներով եզերված հրվանդանի վրա, թիվ 3 դպրոցի տարածքում և բարձունքի լանջերին
Դամբարանադաշտ	Ք.ա. 4-1 հազ.	բնակատեղիի շրջակայքում
ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2 հազ., հել-լեն. ժրջ., միջնադար	Վանաձոր թաղամասում, գետի աջ ափին, «Ծիծեռնակ» ճամբարի տարածքում

Գերեզմանոց	9-14 դդ.	Վանաձոր գետի աջակողմյան վտակի ձախ ափին
ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՄԱՇՏՈՑԻ ԲԼՈՒՐ»	Ք.ա. 4-3 հազ.	Դիմաց թաղամասում, թիվ 8 դպրոցի տարածքում
ԳԵՐԵԶՄԱՆ - ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ	1992 թ.	Տարոն-2 թաղամաս, Շիրակի խճուղի, 20 և 21 փողոցների հատման խաչմերուկում
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-19 դդ.	Խնձորուտ թաղամասի եկեղեցու շրջակայքում
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	17-20 դդ.	Տարոն-4 թաղամասում, գործող գերեզմանոցի հվ մասում
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	1992-1995 թթ.	Տավրոս թաղամասի գերեզմանոցի աե մասում
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	Տարոն թաղամասից 1 կմ հս-աե, Հայդարբեգ գետակի աջ ափին
Գերեզմանոց	ուշ միջնադար	գյուղատեղիում
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՊԱՊԱՆԻ»	5-17 դդ.	քաղաքից 2.5 կմ հվ-ամ, Մետաքսաթելի գործարանի հանգստյան տնից 1 կմ ամ, անտառի բացատում
Գերեզմանոց	5-17 դդ.	գյուղատեղից 250-300 մ հվ, հեղեղատի աջ ափին
Եկեղեցի «Կոտրած»	5-7 դդ., 12-17 դդ.	գյուղատեղից 250-300 մ հվ, բարձունքի վրա, «Կոտրած եկեղեցու թալա» վայրում
Մատուռ	միջնադար	Եկեղեցուց 8 մ հվ, բարձունքի վրա
Քարայր	միջնադար	գյուղատեղիի մոտ, հեղեղատի ձախ ափին
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՓԱՇԻ ԳԵՂ»	միջնադար	հեռուստաաշտարակը կրող սարի աե ստորոտին
Գերեզմանոց	ուշ միջնադար	գյուղատեղիում
ԴԱՄԲԱՐԱՆ	Ք.ա. 2 հազ. 2-րդ կես	Վանաձոր թաղամասում, նախկին գյուղտեխնիկումի մերձակա այգում
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2 հազ. 2-րդ կես	Դիմաց թաղամասում, Տանձուտ գետի աջ ափին, Էլեկտրալամպերի գործարանի տարածքում
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	Բազում թաղամասի աե եզրին, ճանապարհամերձ հատվածում

ԴԱՄԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	Տավրոս թաղամասում, «Հոկտեմբեր» կինոթատրոնից մինչև գերեզմանոց ձգվող տարածքում
ԴԱՄԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	հեռուստաաշտարակը կրող սարի հս-առ ստորոտին, քիմկոմբինատից 100 մ հվ-ամ
ԵԿԵՂԵՑԻ «ԿՈՏՐԱԾ ԺԱՄ»	վաղ միջնադար	քաղաքի ամ եզրին, Փամբակ գետի ձախ ափ
ԽԱՉՔԱՐ	13-14 դդ.	Խնձորուտ թաղամասի հվ եզրին, Խնձորուտ գետի աջ ափին, «Խաչի ձոր» վայրում
ԽԱՉՔԱՐ	13-14 դդ.	Մարզա-դեսանտային կենտրոնի հրապարակում
ԿԻՍԱՆԴՐԻ ՀՈԿՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ	1971 թ.	Տիգրան Մեծի պողոտա, դպրոցի բակում
ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ	1970 -ական թթ.	Շահումյանի անվ. հրապարակում
ՀՈՒՇԱԴՔՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1953 թ.	Խնձորուտ թաղամասում, Վանաձոր-Դիլիջան ճանապարհի ձախ եզրին
ՀՈՒՇԱԴՔՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1955 թ.	քաղաքի կենտրոնական գերեզմանոցում
ՀՈՒՇԱԴՔՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1960 - ական թթ.	Տարոն-4 թաղամասում
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀՈԿՀ. ԱՔԵԼՅԱՆԻ	1965 թ.	թատրոնի շենքի առջև
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾ ՔԻՄԻԱԳՈՐԾՆԵՐԻՆ	1969 թ.	Քիմիագործների զբոսայգում
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1969 թ.	Հաղթանակի փող., անտառափեշի թեքության վրա
ՄԱՏՈՒՐ ՍՔ. ԿԻՐԱԿԻ	1894 թ.	Սասունցիների փող. N 2 տնից հս, Խնձորուտ գետի աջ ափին, «Խաչի ձոր» վայրում
Գերեզմանոց	5-19 դդ.	մատուռի շրջակայքում
ՄԱՏՈՒՐ «ԿԱՄԱԿԱՏԱՐ»	միջնադար, վրկշ. 1841 թ.	Վանաձոր-Ստեփանավան ճանապարհից 300 մ աե, համանուն բլրի գագաթին

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԻ ՇԵՆՔԸ	1972 թ.	Երևանյան հրապարակ
ՏՈՒՆ - ԹԱԳԱՐԱՆ ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ	1980 - ական թթ.	Ստ. Զորյանի փող. 26
ՔԱՆԴԱԿ «ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ»	1981 թ.	Արցախի հրապարակում
ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ		Տարոն թաղապի հս-աե մասում, «Հայդարբեգի ծորում»

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 ՀՀ ԼՈՌՈՒ մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը), տարածքը՝ 3799 քառ. կմ, ամենամեծը հանրապետության հյուսիսային մարզերից: Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արեւելքից՝ Տավուշի, արեւմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները:

Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ եւ ունի ոչ հարթ ռելիեֆ եւ տարածքի մոտ 80% զբաղեցնում են լեռնաշղթաները եւ խոշոր լեռները: Նրա տարածքում են ձգվում Զավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները եւ Լոռվա ձորը: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը (154կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ եւ Փամբակ վտակներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային աղբյուրներով: Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա:

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին եւ բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տեւական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.80C-ից մինչեւ +18oC ամռանը: Ի տարբերություն Շիրակի եւ Տավուշի մարզերի, այստեղ

տեղումների քանակը բավականին մեծ է, տարեկան դիտարկվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարեադարձային է, չափավոր շոգ եւ չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205հա, որից անտառածածկ է 86 հազ. հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները:

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251052.7հա (Մարզի տարածքի 66% և հանրապետության գյուղնշանակության հողերի 12.3%), որից՝ վարելահողեր 42089.4հա (16.8%), բազմամյա տնկարկներ՝ 420.7հա (0.2%), խոտհարքներ՝ 35110.4հա (14.0%), արոտավայրեր՝ 145650.5հա (58%), այլ հողատեսքեր՝ 27781.6հա (11.0%): Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 9612.1հա (22.8%), որոնք հիմնականում գտնվում են Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում: Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակիե, «Մարգահովիտիե, «Կովկասյան մրտավարդի), ընդհանուր՝ 17576հա մակերեսով, 2 բուսաբանական այգի: Անձնագրավորված են 9 բնության հուշարձան՝ 165 հա ընդհանուր մակերեսով:

Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Լոռվա լեռների հարստությունը համարվում է հիմնականում փայլուն պղինձը, որը առանձնանում է

իր բարձր որակական հատկանիշներով: Օգտակար հանածոները ներկայացված են ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ գունավոր մետաղական հանածոներից են նաև արծաթը, մոլիբդենը, ոսկին (շահագործվում է Թեղուտի, Շամլուղի պղնձի հանքավայրը, Մդարթի եւ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (3-ից 1-ին գոտիականության): Հատկապես մարզի կենտրոնական մասը իր Վանաձոր,

Սպիտակ, Ստեփանավան քաղաքներով առավել զգայուն են սպասվելիք 9 և ավելի ուժգնությամբ երկրաշարժերին: Թերևս դա էր պատճառը, որ 1988թ-ին Սպիտակում տեղի ունեցած երկրաշարժը ավերեց տարածաշրջանը և լուրջ վնասներ հասցրեց մարզի տնտեսությանը:

Մարզում զգալի տարածում ունեն նաև սողանքները, որոնք ներկայացնում են ինչպես առանձին վտանգ, այնպես էլ մեծացնում են սեյսմիկ ռիսկը: Մասնավորապես՝ Փամբակի լեռնաշղթայի Վանաձոր քաղաքին հարող լանջերը, քաղաքի գրեթե ամբողջ երկարությամբ, սողանքավտանգ են:

Լոռին առանձնահատուկ է իր գեղատեսիլ բնությամբ եւ հարուստ պատմամշակութային ժառանգությամբ եւ համարվում է հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի հուշարձաններ ու կոթողներ, այդ թվում հայաստանյան խոշորագույն եւ նշանավոր Սանահինի եւ Հաղպատի վանական համալիրները, որոնք ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Լոռու մարզի մշտական բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 225.0 հազար մարդ (հանրապետության բնակչության 7.5%-ը), այդ թվում՝ քաղաքային 132,8 հազար մարդ (59,0 %), գյուղական՝ 92.2 հազար մարդ (41.0 %), կամ 2001թ-ի դրությամբ նվազել է 61 408-ով (21.4%): 2015թ արդյունքներով ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչության թվի տեսակարար կշիռը Հանրապետության ընդհանուր թվում կազմել է 7.5%, այդ թվում քաղաքային բնակչությունը՝ 7.0%, գյուղական բնակչությունը՝ 8,4%:

Լոռու մարզի ազգաբնակչության 97% հայեր են, մարզի 89 համայնքներում բնակվում են ռուս (1.5%), հույն (1.0%), եզդի, քուրդ, ասորի, և այլ ազգերի (0.5%)

ներկայացուցիչներ: Քաղաքային համայնքներում բնակվում են 2937 (2.2%), իսկ գյուղական համայնքներում՝ 3245 (3.5%) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Լոռու մարզի մրցակցային առավելությունն է դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ M6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման եւ M3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները եւ մարզի

տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Գործող օդանավականներ չկան:

Լոռու մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ “Արմենթել” ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), “Ղ-Տելեկոմ” ՓԲԸ (Վիվա սելլ / USU ապրանքանիշ) և “ՅՈՒՔՈՄ” (Ucom ապրանքանիշ):, իսկ վերջին 3 տարում ինտերնետ ծառայություն ևս 3 մասնավոր ընկերություններ: Մարզի բոլոր քաղաքներն ապահովված են 3G կապով, 3G բջջային կայանները՝ օպտիկամանրաթելային կաբելային գծերով: “Արմենթել” ՓԲԸ-ն Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ:

ՀՀ փոստային կապի “Հայփոստ-թրաստ” ԲԲԸ Լոռու մարզի 137 փոստային մասնաճյուղերը ապահովելում են մարզի համայնքների 100 տոկոս ծածկույթը:

ՀՀ Լոռու մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են “Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց” ՓԲԸ կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 80% ծածկույթը եւ մարզի բնակչության 86.9%:

Լոռու մարզի ամբողջ տարածքն ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է հանրապետական եւ օտարերկրյա թվբորբային 8 հեռուստաընկերությունների հաղորդումներ, մարզային “Ֆորտունա TV”, գործում են 6 տեղական հեռուստաընկերություններ: Մարզկենտրոնում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ:

Տեղական ռադիոցանց ունեն Վանաձոր եւ Սպիտակ համայնքները:

Լոռու մարզի ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 891.1կմ, այդ թվում՝

*միջպետական նշանակության՝ 218.9 կմ,

*հանրապետական նշանակության՝ 264.3կմ,

*տեղական նշանակության՝ 407.9կմ:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:

Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրառատ լեռնային գետը՝ Դեբեդը, որի ափին դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին կառուցվել է «Ձորագետ հիդրոէլեկտրակայան»՝ 26.4 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: ՀԷԿ-ն արտադրում է հանրապետության հիդրոէներգիայի 4.1% և բավարարում մարզի պահանջների շուրջ 38.8%:

Մարզում գործում են 24 ՓՀԷԿ-եր՝ ընդհանուր 64.3ՄՎտ հզորությամբ, որոնք արտադրում են ՀՀ ՀԷԿ –երի արտադրության 5.1 %:

Միևնույն ժամանակ, կառուցման փուլում են գտնվում ևս 9 փոքր ՀԷԿ-եր՝ 9 699 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 39.8 մլն կՎտժ-ով:

2005թ.-ին Պուշկինի լեռնանցքում՝ ծովի մակարդակից 2038մ բարձրության վրա կառուցվել է 2,64 ՄՎտ ընդհանուր հզորությամբ «Լոռի-1» հողմակայանը: Այն Հայաստանում շահագործված առաջին հողմակայանն է: Մարզում առկա է հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ պոտենցիալ:

Մարզում կա ջրի մաքրման կայան միայն Վանաձոր քաղաքում, հզորությունը 150լ/վ հզորությամբ, սպասարկում է քաղաքի բնակչության միայն 11%-ը: Լոռու մարզի բոլոր համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի միջոցով: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգից օգտվում է մարզի բնակչության 60%:

Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ:

ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2015թ.-ին կազմել է 1,316.4 հազ. մարդ, որը ՀՀ ընդհանուր բնակչության 43.9%-ն է կազմում: 2015թ. Լոռու մարզում

բնակվում է հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչության 8.7%-ը կամ 114.7 հազար մարդ, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 58.8%-ը: 2013թ.-ի նկատմամբ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազել է 12.5%-ով, որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 3.7%-ով:

Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերության 8.9%, գյուղատնտեսություն՝ 7.5%, շինարարություն՝ 5.6%, մանրածախ առևտուր՝ 3.6% և ծառայությունների՝ 1.5%: Հաշվի առնելով մարզի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ բնակչության կազմում՝ 7.5% է, պարզ է դառնում, որ մարզի արդյունաբերության զարգացվածության աստիճանը ավելի բարձր է քան միջին հանրապետության ցուցանիշը, գյուղատնտեսության ցուցանիշը հավասար է հանրապետության միջինին, մնացած ցուցանիշներով մարզը ցածր է գտնվում հանրապետության միջին ցուցանիշներից:

Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է (Թումանյանի տարածաշրջան): Արդյունաբերության հիմնական ուղղությունները հանքագործական (միակ մարզը ՀՀ հյուսիսային մարզերից), մշակող (մասնավորապես՝ մետաղագործական և սննդի) և թեթև արդյունաբերություններն են (Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

Մարզի արդյունաբերության ընդհանուր ծավալում հանքարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 45.7%, մշակող արդյունաբերությանը՝ 43.8%, էլ.էներգիայի արտադրությանը՝ 9.6%, ջրամատակարարմանը և այլ ճյուղերինը՝ 0.9%:

2015թ. մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2011թ. համեմատությամբ աճել է 163.7%-ով, հանրապետության 132.8%-ի, Շիրակի մարզի 95.4%-ի և Տավուշի մարզի 161.7%-ի դիմաց: Միայն 2015թ ընթացքում մարզի 4 արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրել են իրենց գործունեությունը, իսկ 6-ը սկսել են արտադրանք թողարկել:

2015թ. մարզում գործել են 25 փոքր ՀԷԿ և 1 հողմակայան, որոնք արտադրել են 207.3 մլն ԿՎտ/ժամ էլեկտրական էներգիա, աճը 2014թ. նկատմամբ կազմել է 125.6%: ՀԷԿ-ի արտադրանքը կազմում է հանրապետության ՀԷԿ-ի արտադրանքի 9.2%:

Մարզում առկա են մետաղական հանքավայրեր (պղինձի, ոսկու, մոլիբդենի, բազմամետաղների, ֆելզիտային և դացիտային տուֆեր, հանքային ջրեր և այլն):

Լոռու մարզում 2015թ. մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը գրեթե հավասար է հանրապետական միջին ցուցանիշին, սակայն 1.3 անգամ զիջում է Շիրակի մարզի և 1.1 անգամ Տավուշի մարզի ցուցանիշներին: 2015թ.-ին 2011թ-ի. համեմատությամբ մարզում մեկ շնչին ընկնող համախառն գյուղատնտեսական արտադրանքը ավելացել է 137.9%-ով:

Լոռու մարզում գործում են 66 նախադպրոցական ուսումնական հաստատություններ (ՆՈՒՀ) 151 խմբով, որից 37-ը գործում են քաղաքային, 29-ը՝ գյուղական բնակավայրերում, 2011թ-ի դրությամբ ՆՈՒՀ-երի քանակն ավելացել է 7-ով: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 2015թ-ին մարզում կազմել է 4474 երեխա, որոնցից քաղաքային բնակավայրերում 3451 երեխա (77.1%), գյուղական բնակավայրերում՝ 1023 երեխա (22.9%): 2015թ.-ի դրությամբ ՆՈՒՀ հաճախող երեխաների թվի աճը 2011թ-ի նկատմամբ կազմել է 121.3%, որը միջին հանրապետականից բարձր է 7.4%-ով: Երեխա-մանկավարժ հարաբերակցությունը 2015թ.-ին կազմում է 12.6/1 հանրապետական միջինի 12.1/1-ի դիմաց: 10.0 հազ. բնակչի հաշվարկով, 2015թ.-ին մարզում ՆՈՒՀ-երի թիվը հանրապետական միջինից բարձր է 8.1%-ով, սակայն զիջում է Տավուշի մարզի ՆՈՒՀ-երի քանակին 1.6 անգամ, հաճախող երեխաների թիվը 2015թ-ի դրությամբ մնում է ցածր 198.84 զիջելով հանրապետական միջինին 21%-ով:

Տնային տնտեսությունների թիվը մարզում կազմել է 64285, որից 41%-ը գյուղական բնակավայրերում և 59%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների քանակը 1790 է կամ ընդհանուր տնային տնտեսությունների 2,8%-ը: Կիսակառույց տներում բնակվող տնային տնտեսությունների քանակը: Ընտանեկան նպաստառու ընտանիքների քանակը 20319 է կամ մարզի ընդհանուր տնային տնտեսությունների շուրջ 31.6%-ը և հանրապետության նպաստառու ընտանիքների 19.1%-ը (2015թ):

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը, վերականգնումը, վնասազերծումը, բնական պաշարների խելամիտ օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ֆիզիկաքիմիական, կենսաբանական, մեխանիկական, ռադիոակտիվ և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը դա շրջակա միջավայրի վրա բնածին և մարդահարույց ներգործության էկոլոգիական հետևանքների վերլուծությունն է՝ շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում իրականացվում է մթնոլորտային օդ և մակերևութային ջրերի մեջ արտանետվող աղտոտող նյութերի քանակի և բաղադրության մշտական հաշվառում և չափումներ, մշակվում են դրանց կրճատման և կանխման միջոցառումներ: Շրջակա միջավայրի վիճակի գնահատման համար սահմանվում են աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաներ, սահմանային թույլատրելի արտանետումներ և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Մարդն իր արտադրական գործունեությամբ մշտապես ազդում է շրջապատող բնության վրա: Այդ ազդեցության հետևանքով բնական միջավայրը կարող է բարելավվել (ծառատնկում, ռոտգում և այլն), դառնալ ավելի բարենպաստ մարդու կյանքի ու գործունեության համար, կամ էլ խաթարվել, քայքայվել:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում: Առաջին, երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում է նրա տարրերը ոչ այն չափով, որքան կարելի է և ոչ այնտեղ, որտեղ կարելի է: Երկրորդ, երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրական կամ

կենցաղային այնպիսի թափոններ և այն քանակով, որ բնությունը չի կարողանում ինքնամաքրվել:

Երկու դեպքերում էլ տեղի է ունենում բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտում, և հասունանում է էկոլոգիական ճգնաժամը, ապա և աղետը:

Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի Մեղրուտ տեղամասի թիվ 30/71 հորատանցքի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր:

Կիրովականի (Վանաձորի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի Մեղրուտ տեղամասի թիվ 30/71 հորատանցքի տարածքում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից:

Տնտեսական վնասը

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների գնահատման և հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 27.05.2015թ-ի «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 764-ն որոշումով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

ՎՏ= ՀԱԳ + ՋԱԳ +ՕՍԳ,

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ.

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն.

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն.

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

4.1 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցությունը լինում է 2 տեսակի՝ ուղղակի ազդեցություն, որը պայմանավորված է դեպի ջրային ռեսուրս վնասակար նյութերի անմիջապես արտահոսքով կամ ջրային ռեսուրսի օգտագործման ծավալով, և անուղղակի՝ պայմանավորված դեպի ջրային ռեսուրս մաքրման կայանների սարքավորումների խափանմամբ և անարդյունավետ աշխատանքի հետևանքով վնասակար նյութերի արտահոսքով:

Հանքային ջրի հորատանցքի շահագործման ընթացքում ջրային ավազանի աղտոտում արտանետումների տեսքով չեն նախատեսվում:

4.2 ՎՆԱՍԱԿԱՐ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝

1. Անօրգանական փոշին:

2. Ազոտի և ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ:

Հորատանցքի ջուրն ինքնահոս է, դրա արդյունահանման համար ածխաջրածինների այրում չի իրականացվում, հետևաբար և դեպի մթնոլորտ արտանետվող վնասակար գազերը բացակայում են: Հանքային աղբյուրի շահագործման արդյունքում փոշու արտանետումներ չեն նախատեսվում:

4.3. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԵՐ

Հորատանցքի զբաղեցրած 0.1հա տարածքը դուրս է մնում օգտագործման շրջանակից, այդ մակերեսի համար հաշվարկվում է տնտեսական վնաս:

Հաշվարկները կատարվել են ըստ ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին», ինչպես նաև ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 15-ի թիվ 1101-Ն՝ «Համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս գտնվող՝ հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների և գյուղատնտեսական նշանակության այլ (անօգտագործելի) հողերի համար» որոշումների:

Հողի դեգրադացիայի (հողի բերրի շերտի վնասման և ոչնչացման) դեպքում $U_{\text{ՀՀ}}$ -ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{ՀՀ}} = U_{\text{Հ}} \times U_{\text{ԳՀ}} \times U_{\text{ԳԲ}} \times U_{\text{ԳՎ}} \times U_{\text{ԳՊ}},$$

որտեղ՝

$U_{\text{ՀՀ}}$ -ն հողի դեգրադացիայի (հողի բերրի շերտի վնասման և ոչնչացման) հետևանքով խախտված (վնասված) հողամասի (տարածքի) արժեքն է,

$U_{\text{Հ}}$ -ն հողի դեգրադացիայի (հողի բերրի շերտի վնասման և ոչնչացման) ենթարկված հողամասի (տարածքի) մակերեսն է՝ մ²-ով, որը որոշվում է փաստացի ուսումնասիրությունների (չափագրումների) հիման վրա,

$U_{\text{ԳՀ}}$ -ն դեգրադացիայի ենթարկված հողամասի (տարածքի) կադաստրային գինն է, որը հաշվարկվում է կարգի 11-րդ կետում նշված կարգով,

$U_{\text{ԳԲ}}$ -ն հողամասի (տարածքի) բնապահպանական արժեքը հաշվի առնող գործակիցն է, որը հաշվարկվում է համաձայն կարգի 21-րդ կետի,

Գ_վ-ն հողի վնասման աստիճանը հաշվի առնող գործակիցն է, որը հաշվարկվում է համաձայն կարգի 25-րդ կետի,

Գ_դ-ն շրջակա միջավայրի վրա դեգրադացված հողերի ազդեցությունը հաշվի առնող գործակիցն է, որը հաշվարկվում է համաձայն կարգի 26-րդ կետի.

$$U_{\text{վզ}} = 1000 \times 1.08 \times 1.4 \times 3 \times 0.6 = 2721,6 \text{ ՀՀ դրամ}$$

Հողային ռեսուրսներին հասցված տնտեսական վնասը կկազմի 2721.6 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրին հասցված հնարավոր տնտեսական վնասը կազմում է՝

$$\text{ՎՏ} = 2721.6 + 0 + 0 = 2721.6 \text{ ՀՀ դրամ,}$$

4.4. ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐ և ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ

Հանքային աղբյուրի տարածքում բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության արտադրական թափոններ չեն առաջանում:

Կարող է առաջանալ միայն կենցաղային աղբ.

- Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, պլաստմասը և այլն:

Թափոնների առաջացման նորման 0.3մ³/տարի 1 մարդու համար:

Տեսակարար կշիռը՝ 0.25 տ/մ³:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ:

4.5 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ

Հանքային աղբյուրի շահագործման աշխատանքները զրոյական ազդեցություն ունեն շրջակա միջավայրի կենդանական և բուսական աշխարհի վրա:

5. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Շրջակա բնական միջավայրի որակի պահպանության և մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը տարբեր ազդեցությունների գիտականորեն հիմնավորված, բնակչության առողջությունը և էկոհամակարգերի անվտանգությունը երաշխավորող սահմանային թույլատրելի մեծություններն են, որոնք հաստատվում և փոփոխվում են ՀՀ շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների կողմից՝ հաշվի առնելով երկրի բնական պայմանները, գիտատեխնիկական պահանջները, միջազգային ստանդարտները:

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրա գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիի առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից լիազոր մարմնի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:

3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

4. Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ: Հորատանցքի

շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև աղբյուրի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:

5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

6. Հակավթարային միջոցառումներ:

7. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ:

8. Նախատեսված արդի սարքավորումների տեղադրման շնորհիվ ջրի խնայողություն՝ կբացառվի ջրի վերաթափումը և կորուստը:

9. Առողջարանի տարածքում նախատեսված է կանաչ գոտի:

10. Չոր և շոգ եղանակներին բաց հրապարակներում և մերձակա ճանապարհներին կատարվելու է ջրցանում՝ փոշենստեցման նպատակով:

11. Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով:

12. Իրականացնել թափոնների կառավարումը՝ համաձայն լիազոր մարմնի կողմից հաստատված նախագծի:

13. ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշման պահանջներին համապատասխան նախատեսել բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

14. Նախատեսել կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ, հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

